ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
*«Գյումրի քաղաքի երեխաների
սոցիալական հոգածության կենտրոն
ՊՈԱԿ*

**RA MINISTRY OF LABOR
AND SOCIAL ISSUES**
*"Gyumri Social Childcare
Centre" SNCO*

« 13 » « նոյեմբեր » 2014թ.

Թիվ 128

ՀՀ, ք. Գյումրի, Տերյան 6գ
Հեռ: (095) 11-25-24

Հավելված 7
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված սննդամթերք:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԳՔԵՍՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-2015/1»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Գյումրի, Տերյան 6գ հասցեով, մինչև 2014 թվականի «նոյեմբերի» «25»-ը, ժամը «15:00»-ը: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Սևակ Աղաբեկյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն, «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, ք. Գյումրի, Տերյան 6գ հասցեում, 2014 թվականի «նոյեմբերի» «25»-ին, ժամը «15:00»-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի ձեռքբերումը:

«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ սննդամթերքի մատակարարման (որոնք կազմված են՝ 28 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են

պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gqeshk@mail.ru:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝ Լ. Պետրոսյան

Հավելված 5
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԳՔԵՍՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-2015/1» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Դ Ի Մ Ո Ւ Մ

## Գնման ընթացակարգին մասնակցելու

_________________________________________________________________________________հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը) «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի 2015թ.-ի կարիքների համար սննդամթերք ձեռքբերելու նպատակով «ԳՔԵՍՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-2015/1» ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի բոլոր չափաբաժիններին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_______________________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

__________________________________________________-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ «____________________________________»:
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_______________________________________________________________________________ ________________________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

______________________________________2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով
ընթացակարգի հրավերի

«ԳՔԵՍՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-2015/1»
ծածկագրով ընթացակարգի գնահատող
հանձնաժողովին

# Գ ն ի  ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳՔԵՍՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-2015/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

________________________________________-ն առաջարկում է պայմանագիրը
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կատարել հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| ... | ... | | | |
| ... | ... | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

***Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

________________________________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

______________________
(ստորագրությունը)

Կ. Տ.

______________________2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

# ՄՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԳՔԵՍՀԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-2015/1»

ք. ______ << >> << >> 2014 թ.

'Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն' ՊՈԱԿ-ը, ի դեմս կազմակերպության տնօրեն Լաուրա Պետրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ' 'Գնորդ', մի կողմից, և ______________________-ն, ի դեմս ընկերության տնօրեն' ______________________, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև' Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով' Տեխնիկական բնութագրով նախատեսված ______ /այսուհետ' Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր,որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1 Գնորդն իրավունք ունի'**

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի' սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքն' իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7,2 կետով նախատեսված տույժը:

բ) հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը վաճառողի կողմից պարտավորությունները խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք' սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն' սույն պայմանագրով սահմանված սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը .

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում,եթե'

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք,որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը.

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է'**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում' նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո' ողջամիտ ժամկետում, երբ սույն պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ' ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3 Վաճառողն իրավունք ունի'**

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլումմատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է ՝ ————(————) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածում:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով:Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին,Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Պայմանագրի կամ դրա մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության, երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

**9,1,2 Սույն պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքվելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:**

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9,5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9,6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9,7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2 և 3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9,8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9,9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
| --- | --- |
| _____________________ (ստորագրություն) | _____________________ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3
<< >> << >> 2014թ. կնքված
,N ________________ *ծածկագրով գնման պայմանագրի*

Վաճառող
______________________
______________________
գտնվելու վայրը ___________
հh ___________
______________________
հվհh ___________

Գնորդ
______________________
______________________
գտնվելու վայրը ___________
հh___________
______________________
հվհh___________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

<<____>> <<________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ______________________________________________
______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ____________________________________________ և
Կատարողը՝ ի դեմս____________________________________________________,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ մատակարարումները) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _________ 20___թ-ից __ _________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում մատակարարել է հետևյալ ապրանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | մատակարարումների ժամկետները | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Մատակարարումը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Մատակարարումը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Հավելված 1
« »« » 2014թ. կնքվելիք
թիվ «________» ծածկագրով գնման պայմանագրի

## «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման

# Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց

| Ապրանքի | | | | | 2015 թվականին գնման ենթակա սննդամթերքի քանակը | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Բ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Միավորի գինը | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Քանակը /տարեկան/ | Գումարը /տարեկան/ | Գնման ժամանակացույցը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | Հաց | Ցորենի 1-ին տեսակի ալյուրից պատրաստված, ՀՍՏ 31-99: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 90 %: | կգ | | մինչև 870 | մինչև 930 | մինչև 975 | մինչև 975 | մինչև 3750 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 2 | Կոտլետ | Կոտլետ կիսաֆաբրիկատ, պատրաստված աղացած տավարի մսով՝ համեմված տարբեր համեմունքներով, թողարկված կշռով և հատով, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով, ՀՍՏ 44-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | մինչև 180 | մինչև 180 | մինչև 195 | մինչև 195 | մինչև 750 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 3 | Նրբաբլիթ | Նրբաբլիթ կիսաֆաբրիկատ, պատրաստված ցորենի բարձր տեսակի ալյուրից, կաթնաhունց, աղացած տավարի մսի լցոնով՝ համեմված տարբեր համեմունքներով, թողարկված կշռով և հատով, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով, ՀՍՏ 44-2007: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | մինչև 180 | մինչև 180 | մինչև 195 | մինչև 195 | մինչև 750 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Երշիկ եփած | Երշիկ եփած՝ պատրաստված տավարի և խոզի մսից, ըստ ԳՕՍՏ 23670-79 կամ արտադրողի տեխնիկական պայմանների, խոնավությունը ոչ ավելի քան 68%, փաթեթավորած վակուումային կամ առանց, յուրաքանչյուր փաթեթավորման միավորը համապատասխան պիտակավորմամբ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | մինչև 33 | մինչև 39 | մինչև 39 | մինչև 39 | մինչև 150 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 5 | Նրբերշիկ | Բարձր տեսակի, պատրաստված տավարի և խոզի կամ տավարի և հորթի մսերից, աղիքով, փաթեթավորումը վակումային կամ ոչ վակումային: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19 ի N 1560-Ն որոշմամբ հաստատված <Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | կգ | | մինչև 54 | մինչև 54 | մինչև 58,5 | մինչև 58,5 | մինչև 225 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 6 | Հավի բուդ | Հավի բուդ պաղեցրած, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, պահված 0-ից մինչև 4 °C ջերմաստիճանի պայմաններում, բժշկական փաստաթղթերով, ԳՕՍՏ 21784-76: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված "Մսի և մսամթերքի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | կգ | | մինչև 165 | մինչև 195 | մինչև 195 | մինչև 195 | մինչև 750 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7 | Պանիր Լոռի | Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 45-50 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | մինչև 68 | մինչև 76 | մինչև 78 | մինչև 78 | մինչև 300 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 8 | Կարագ | Սերուցքային, յուղայնությունը՝ 71.5-82.5 %, բարձր որակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0,7 գ, ածխաջուր 0,7 գ, 740 կկալ, չափածրարված 5-25 կգ: ԳՈՍՏ 37-91: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: | կգ | | մինչև 60 | մինչև 60 | մինչև 65 | մինչև 65 | մինչև 250 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 9 | Թթվասեր | Կովի թարմ կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 0T, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1925-Ն որոշմամբ հաստատված <Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 %: | կգ | | մինչև 142,5 | մինչև 157,5 | մինչև 162,5 | մինչև 162,5 | մինչև 625 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | Կաթնաշոռ | Կաթնաշոռ 18 և 9,0% յուղի պարունակությամբ կամ անյուղ, թթվայնությունը՝ 210-240°T, փաթեթավորված սպառողական տարաներով, 200-500գ տուփերով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N1925-Ն որոշմամբ հաստատված "Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | մինչև 142,5 | մինչև 157,5 | մինչև 162,5 | մինչև 162,5 | մինչև 625 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 11 | Բուսական յուղ /ձեթ/ | Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզման և ճզման եղանակով, բարձր տեսակի, զտված, հոտազերծված, փաթեթավորումը՝ շշալցված մինչև 5լ տարողություններում, ԳՕՍՏ 1129-93: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | լ | | մինչև 60 | մինչև 60 | մինչև 65 | մինչև 65 | մինչև 250 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 12 | Ձու | Հավի ձու սեղանի կամ դիետիկ, 1-րդ կարգի, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7 օր, սեղանի ձվինը՝ 25 օր, սառնարանային պայմաններում՝ 120 օր, ՀՍՏ 182-2012: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի «Ձվի և ձվամթերքի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1438-Ն որոշմանը և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 90 % | հատ | | մինչև 1200 | մինչև 1200 | մինչև 1300 | մինչև 1300 | մինչև 5000 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 13 | Աղ | Կերակրի մանր աղ՝ բարձր տեսակի, յոդացված ՀՍՏ 239-2005 Պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 12 ամիս: | կգ | | մինչև 11,6 | մինչև 12,4 | մինչև 13 | մինչև 13 | մինչև 50 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | Մրգահյութ | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս, ԳՕՍՏ Ռ 52184-2003, ԳՕՍՏ Ռ 52185-2003 կամ ԳՕՍՏ Ռ 52186-2003Է Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009 թ. հունիսի 26-ի N 744-Ն որոշմամբ հաստատված "Հյութերին և հյութամթերքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի", "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | լ | | մինչև 1160 | մինչև 1240 | մինչև 1300 | մինչև 1300 | մինչև 5000 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 15 | Շաքարավազ | Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել, ԳՕՍՏ 21-94 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: Պիտանելիության մնացորդային ժամկետը՝ մատակարարման պահին սահմանված ժամկետի 80%-ից ոչ պակաս | կգ. | | մինչև 57 | մինչև 63 | մինչև 65 | մինչև 65 | մինչև 250 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Կոնֆետ շոկոլադ | Կակաո մթերքի, շաքարավազի, կաթնամթերքի, ընկուզեղենի, լեցիտինի, բուսական յուղերի, վաֆլու փշուրի, կարամելի փշուրի, կոկոսի քերուկի, դարչինի, բնական անուշահամ նյութերի, վանիլինի պարունակությամբ: Կախված կոնֆետի տեսակից՝ խոնավության զանգվածային մասը՝ 4-25 %-ից ոչ ավել, փաթեթավորումը՝ ստվարաթղթի մեջ՝ հատավոր, կշռածրարված տուփերով, խառը տեսականիով: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | մինչև 72 | մինչև 63 | մինչև 39 | մինչև 63 | մինչև 237 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 17 | Կոնֆետ կարամել | Կոնֆետներ կարամել, թարմեցնող, պինդ, համասեռ, արտաքին մակերեսը փայլուն, մրգային միջուկով, ձևը, համը և հոտը՝ համապատասխան բաղադրագրի և տեխնոլոգիական հրահանգի, ԳՕՍՏ 6477-88 կամ համարժեք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 70 % | կգ | | մինչև 33 | մինչև 51 | մինչև 78 | մինչև 54 | մինչև 216 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 18 | Թխվածքաբլիթ | Գեղարվեստական ձևավորմամբ, փխրուն կամ բիսկվիթային թխվածք: Անվտանգությունը՝ ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, իսկ մակնշումը՝ "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, արտասահմանյան արտադրության, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | կգ | | մինչև 36 | մինչև 36 | մինչև 39 | մինչև 39 | մինչև 150 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 19 | Վաֆլի | Շոկոլադապատ կամ վանելինային միջուկով չափածրարված և առանց, չափածրարված տուփերով կամ կշռով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս քան 80 % | կգ | | մինչև 33 | մինչև 36 | մինչև 39 | մինչև 39 | մինչև 147 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | Խնձոր | Տրամագիծը 6 սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների, պտղաբանական 1-ին խմբի, Հայաստանի տարբեր տեսակների,ԳՕՍՏ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | | մինչև 360 | մինչև 620 | մինչև 480 | մինչև 210 | մինչև 1670 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 21 | Սալոր | Թարմ, I տեսակի, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | 0 | 0 | մինչև 80 | 0 | մինչև 80 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 22 | Դեղձ | Տրամագիծը 7սմ-ից ոչ պակաս, թարմ, 1-ին տեսակի, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, չվնասված: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | | 0 | 0 | մինչև 90 | 0 | մինչև 90 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 23 | Տանձ | Թարմ, I տեսակի, առողջ, չվնասված, տանձին հատուկ ձևով և գույնով, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | 0 | 0 | 0 | մինչև 90 | մինչև 90 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | Կարալյոկ | Տրամագիծը 6սմ-ից ոչ պակաս, թարմ, I տեսակի, ամբողջական, հասած, առողջ, մաքուր, չվնասված: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված "Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի" և "Սննդամթերքի անվտանգության մասին" ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | 0 | 0 | 0 | մինչև 90 | մինչև 90 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 25 | Նարինջ | Տրամագիծը 7սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների, ԳՕՍՏ 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | | մինչև 150 | 0 | 0 | մինչև 170 | մինչև 320 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 26 | Բանան | Երկարությունը 11սմ-ից ոչ պակաս, թարմ, մաքուր, առանց մեխանիկական վնասվածքների, առանց վնասատուների վնասվածքների և հիվանդությունների, ԳՕՍՏ 4427-82: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի | կգ | | մինչև 70 | 0 | 0 | մինչև 90 | մինչև 160 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |
| 27 | Վարունգ | Երկարությունը 8սմ-ից ոչ պակաս, միջին և երկար չափերի, թարմ, ամբողջական, առողջ, չկեղտոտված, առանց մեխանիկական վնասվածքների: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | 0 | մինչև 154 | մինչև 455 | մինչև 16 | մինչև 625 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | Լոլիկ | Տրամագիծը 5սմ-ից ոչ պակաս, թարմ, ամբողջական, չվնասված:Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված <Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի> և <Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: | կգ | | 0 | մինչև 154 | մինչև 455 | մինչև 16 | մինչև 625 | մինչև .... | ըստ պատվիրատուի ներկայացված հայտի /ձևը կցվում է/, օրական, շաբաթական, ամսական պարբերականությամբ |

*Պարտադիր պայման. Ապրանքը պետք է լինի սահմանված ստանդարտներին համապատասխան /փաթեթավորված/

*Մատակարարման քանակները կարող են կրճատվել և ավելանալ՝ ելնելով փաստացի խնամվող շահառուների թվաքանակից

*Պատվիրատուի կողմից ապրանքների գնման հայտ ներկայացնելուց հետո՝ մատակարարը պարտավոր է հայտում նախատեսված ժամկետներում մատակարարել ապրանքները /ապրանքների մատակարարման ժամկետները պատվիրատուի կողմից ներկայացված հայտում չի կարող պակաս լինել երեք օրացուցային օրից, բացառությամբ հացամթերքի և կաթնամթերքի/

*Ապրանքները պետք է մատակարարվեն հետևյալ հասցեով՝ ք. Գյումրի, Տերյան 6գ, պահեստ

**ԳՆՈՐԴ**

_______________

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

_______________

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 2
« »« » 2014թ. կնքվելիք
թիվ «________» ծածկագրով գնման պայմանագրի

**«Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. դրամ/

| Ձեռք բերվող ապրանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2015 թվականի պետական բյուջեից, ընդ որում՝ | | | | Տարեկան | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | | |
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* | *7* | *8* |
| Սննդամթերք | 426700 | | | | | 100% | 100% |

*Վճարման ժամանակացույցը լրացվում է ամողական:

**ԳՆՈՐԴ**

_______________
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

_______________
/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատում եմ՝ ____________________

«____» «______________» 2014թ,
Պատվիրատու՝«Գյումրի քաղաքի երեխաների
սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ
Տնօրեն՝ Լաուրա Պետրոսյան

# ՀԱՅՏ N

## /Գնման պայմանագրի /անվանումը, համարը/

| հ/հ | Ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Հայտի ներկայացման ժամկետը /ամիս, ամսաթիվ/ | Ապրանքների մատակարարման ժամկետը /ամիս, ամսաթիվ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |
| 2 | | | | | |
| 3 | | | | | |

Կազմեց՝ ____________________ /պաշտոնը, անուն ազգանունը/
/ստորագրություն/